

### Յ.Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի Ուղերձը՝ Հայաստանի Անկախութեան Տօնի Առիթով

Սեպտեմբեր 21ի անկախութեան վերականգնման օրուան առիթով, անխառն հպարտութեամբ կ'ողջունենք մեր հայրենիքի վերանկախացման 17րդ տարեդարձը: Միաժամանակ, բարոյական բաւարարութեամբ կը հաստատենք այն ազգային փաստը, որ հայութեան դեմ բռնակալական վարչաձեւերն ու իրերու անողոք դասաւորումները չկարողացան անկախութեան մեր ձգտումը անջատել հայկական հողի ընդերքէն եւ հայ մարդու հոգիէն: Արդարեւ, այդ ձգտումը անքակտելիօրէն արմատացած մնաց մեր առաջին հանրապետութեան ծնունդ տուող Մայիս 28ի հերկած ակօսներուն մէջ, ուր անկախութիւնը վերածուեցաւ ազգային պահանջի: Հայրենիքի վերանկախացումը մէկ օղակն է հայութեան անկախացման երթի շղթային, որ կոփուած է Մայիս 28ի սալին վրայ:

Մեր հայրենիքը այսօր անկախ է դարձեալ, որովհետեւ ձգտեցանք այդ անկախութեան, պայքարեցանք անոր համար ու վերականգնեցինք զայն: Այժմ պէտք է պահպանենք զայն, ընդլայնենք զայն ու ձեռնարկենք անկէ բխող մեր անկատար տենչերու կատարման: Ամերիկահայութիւնը խորապէս կը հաւատայ այս խոստումին եւ պատրաստ է տրամադրելու ամբողջական նեցուկ՝ անոր նուաճման համար:

Կը հաւատանք որ հարեւաններու հետ մարտավարական յարաբերութիւններ պէտք չէ հեռացնեն մեզ մեր ազգային շահէն, այլ՝ պէտք է ծառայեն անոր ամրապնդման:

Ազգային համրանքի կեդրոնացումով, տնտեսական կեդրոնացումով, մտաւոր կեդրոնացումով ու կամքի կեդրոնացումով՝ հայրենի պետութիւնը, իր կողքին ունենալով հայրենի ժողովուրդն ու Սփիւռքահայութիւնը, պիտի կարենայ հասնիլ նաեւ հողի կեդրոնացման: